

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

† Արգար Յովհաննիսիսան:—Բազուի Մարդասիրական ընկերութեան վարչութեան գործութեուրիւթը 1903 թ.:—Ըշխատանի տուեր եւ մօայրուած Որբանոցը:—Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութիւնները:—։ Դրամատիկական ընկերութեան ընդհանուր ժողովը:—Թիֆլիսի հահանգապետի վճիռը:—Դատաստանական վճիռներ:—Խորիս աւանը խաղաքի վերածուած:—Փողի փոխադրութիւններ:—Կառավարիչը:—Մամուջի վերաբերյալ:

Ժուսաւորութեան մինիստրութեան նոր կառավարիչը:—Մամուջի վերաբերյալ կարգադրութիւններ:

Ապրիլի 15-ին Բաթումում վախճանուեց դեռ համեմատաբար երիտասարդ հասակում (մօտ 55 տարեկան) յայտնի հասարակական և գրական գործիչ Արգար Յովհաննիսիսանը: Հանգուցեալը ի բնէ օժտուած էր փայլուն, թէև մակերևոյթային ընդունակութիւններով. կենսուրախ, սրամիտ, «դարդիմանդ» մարդ էր նա ընկերական շրջաններում, փայլուն, սակայն ոչ տոկուն ու աշխատասէր հասարակական գործունէութեան մէջ:

Նրա հայրը (եթէ չենք սխալում՝ Հին-Զուղայեցի) Թիֆլիսում շատ յայտնի բժիշկ էր: Խնտելիգենսու և ունկոր ընտանիքում ծնուած Արգար Յովհաննիսիսանը իր միջին կրթութիւնը ստացել էր Պետերուրուգում Կարապետ Եղեանի ղեկավարութեամբ. մի հանգամանք, որ անշուշտ ազդեցութիւն է ունեցել հանգուցեալի աշխարհայեցողութեան կազմակերպուելու ժամանակ: Ա. Յովհաննիսիսանը համալսարանական կրթութիւնը ստացել է Գերմանիայում, ուր ուսել է քաղաքատնտեսական և Փինանսական առարկաներ: Վերադառնալով եօթանասնական թուականներին իր ծննդավայրը՝ նա շատ շուտով կարողացաւ աչքի ընկնող հասարակական դիրք գրաւել Թիֆլիսում: Բանկային հաստատութիւններից մէկում պաշտօն ստանձնելով նա չրաւականացաւ և հէնց առաջին տարիներից իր անունը կապեց մեր գրական հասարակական գործերի հետ: Իբրև Թիֆլիսի քաղաքային խորհրդարանի ձայնաւոր, Ներսիսիսան դպրոցի և Յովհաննեան ուսումնարանի հոգաբարձու, հայոց թա-

տրոնի առաջադիմութեան նախանձախնդիր, Հրատարակչական Ընկերութեան նախագահ, կաթողիկոսական ընտրութիւնների պատգամաւոր ևայլն ևայլն նա ստանձնել էր աւելի պատուաւոր, քան գործունեայ գերեր Գրական ասպարիզում էլ, չնայած որ սեփական օրգաններ ունէր, հանդիսանում էր աւելի իրբե հրատարակիչ, մեկենաս, ղեկավար, ներշնչող, քան գրող և սեփական գրչով որոշ զաղափարների համար մարտնչող: Գրական ասպարիզում նա իր գործունէկութիւնը սկսեց՝ հիմնելով 1876 թուականին «Փորձ» եռամսեայ հանդէսը, որ յետոյ դարձրեց ամսագիր: «Փորձը» կարելի է աւելի գրական ժողովածու համարել, քան ընթացիկ կեանքին հետեւող մի օրգան: Եթէ համեմատէք նրան իր նախորդների—«Հիւսիսափայլի» կամ «Կոռունկի» հետ, անշուշտ աւելի հարուստ գրական-պատմական նիւթեր կը գտնէք, սակայն չէք հանդիպի ոչ նազարեանցի և ոչ Աղարէկեանի ոգևորուած, համոզուած քարոզներին, չէք գտնի հրապարակախօսութիւն: «Փորձ»-ի մէջ բացակայում է ինքը խըմբագիր Արգար Յովհաննիսեանը իրբե հրապարակախօս: Նա «Փորձ»-ի հրատարակիչ էր, բայց ոչ խմբագրող: Իրբե հրատարակիչ՝ չուղենալով գիմանալ ղեփիցիտներին—դադարեցից իր հանդէսը, որի փոխարէն հիմնեց «Արձագանք» շաբաթաթերթ: «Արձագանք»-ի մէջ աւելի արտայայտուեց Արգար Յովհաննիսեանի գրական-հասարակական անհատականութիւնը: «Փորձում» կարմիր թելի նման անցնում էր ազգասիրական տեխնդենցը, որ «Արձագանք»-ի մէջ աւելի նացինսալիստական արտայայտութիւն ստացաւ և միացաւ Հայաստանեայց եկեղեցու մէջ կղերական գերիշխանութեան պատուաստելու ձգտման հետ: Նա չէր քաշուում ծաղրելու ժողովրդական սկզբունքը, ղեմոկրատիական արտայայտութիւնները: Եւ ահա «Արձագանք»-ի Արգար Յովհաննիսեանը իր համոզունքներով վերջիվերջոյ մօտեցաւ մեղուական աշխարհայեցողութեան, որի հեղինակաւոր ներկայացուցիչն էր Պետրոս Սիմէոնեանը: Այդ էվոլյուցիան կատարուեց մեծ աղմուկով և բուռն ու կրքոտ արտայայտութիւններով: Մեղանում ընդունուած բանակուական ձևերը թոյ չէին տալիս լրջօրէն, հանգիստ, բազմակողմանի քննութեան ենթարկելու մեր կեանքի զանազան հասարակական հարցերը: ամենաբարդ երևոյթները ամենաթեթև գրչի հարուածներով էին լուծում: Ինքը Ա. Ցողմնակի գործերով զբաղուած լինելով, պայքարը տանում էին նրան շրջապատող կամակատարները, որոնց համար կուսակցական չնշին շահերը աւելի մեծ նշանակութիւն ունէին, քան հաստատութիւնները: Այդ վարձկանները հաճոյանալու եռանդից կուրացած՝ չափ ու սահման մոռանում էին և

վայրենի անընտրողականութեամբ յեղաշրջում փաստերը, պըդտորում հասարակական կարծիքը: «Մերոնց» և «ձերոնց» գործերը քննելու մէջ ընդունուած էր երկու կշիռ և երկու չափ գործադրելու սիստեմը: Այդպիսի հրապարակախօսութիւնը՝ միայն կարող էր զնաս բերել և ոչ օգուտ: Դժբախտաբար Ա. Յովհաննիսեանը չկարողացաւ բանակոխւը, քննադատութիւնը իր օրգանում վայելութեան և էթիկայի սահմաններում պահել, նա չկարողացաւ ներշնչել իր համհարզների մէջ ճշմարտութիւնը որոնելու քաջութիւն, իսկ սուտումուտ փաստերի վրայ հիմնուած «հրապարակախօսութիւնը» թէկուզ ժամանակաւոր աշողութիւն ունենար, չէր կարող մազաչափ օգնել անյայտութեան և տղիտութեան մէջ խարիսխափող ժողովրդին:

«Արձագանք»-ում էլ ինըը խմբագիրը սակաւ էր գրում. Նրա ինքնուրոյն գրուածքներից ուշագրաւ են երգիծարանական կտորները, որոնք այնքան բնորոշ են հեղինակի գրական պատկերը բնորոշելու տեսակէտից: Արգար Յովհաննիսեանցի (Մախլաս) երգիծարանութիւնները չունին Ասիացու կամ Պարոննեանի ծաղրի վշտոտ և ազնուացնող հասարակական նշանակութիւնը. Նրա ծիծաղի տակ չեն թագնուած արցունքներ, այլ չարաճճի կատակներ, ծիծաղելի համեմատութիւններ, բառախաղութիւններ, ուրոնք թուոցիկ ժպիտ միայն կարող են յարուցել: «Փորձ»-ից և «Արձագանք»-ից բացի պէտք է յիշատակել նաև Արգար Յովհաննիսեանի ծրագրով, մասնակցութեամբ և միջոցներով հրատարակուած «Արտեմիսիche Bibliothek»-ը:

Չնայած իր գործունէութեան բացասական կողմերին Արգար Յովհաննիսեանցի դրական արժանիքները տուել էին նըրան որոշ ժողովրդականութիւն: Այդ երեաց ապրիլի 20-ին կայացած թաղման ժամանակ. հասարակութեան գանազան շըրջաններից մօտ 60 պսակ էր դրուած նրա դագաղի վրայ: Առանձին յարգանքներ ցոյց տուեց մեր հոգևորականութիւնը: Ամեն. Հայոց Կաթողիկոսը էջմիածնի տաճարում հոգեհանգիստ կատարել տուեց, որին ներկայ էր Ինքը: Հանգուցեալի թաղման ներկայ էին մի եպիսկոպոս և երեք վարդապետներ, որոնք ուղարկուած էին կաթողիկոսի կողմից: Վեհափառ Հայրապետի հրամանով Արգար Յովհաննիսեանը թաղուեց Վանքի բակում, Լոռիս-Մելիքեանի շիրմի կողքին:

Լ. Ս.